

ԿԱՐԾԻՔ

Վարդուհի Գազիկի Միրիջանյանի «Իրավաբանական փաստաթղթերի
թարգմանության խնդիրը գործառական-հաղորդակցական լույսի ներքո»

Ժ. 02.07 – «Ռումանագերմանական լեզուներ»

մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Վարդուհի Միրիջանյանի աշխատանքը լայն իմաստով նվիրված է
լեզվաբանության կարևորագույն բնագավառներից մեկի՝ խոսքի կառուցման,
խոսքաստեղծման և խոսքընկալման օրինաչափությունների ուսումնասիրությանը,
իսկ հետազոտության բուն խնդիրը իրավաբանական խոսույթի, հատկապես
իրավական պաշտոնական փաստաթղթերի լեզվական, ոճագործառական և
թարգմանական առանձնահատկությունների համակարգային քննությունն է
իրավաբանական հաղորդակցության համատեքստում՝ իրավունքի լեզվին բնորոշ
լեզվական միավորների ճշգրիտ գործառույթի և համարժեք թարգմանության
ապահովման համար:

Այսօր իրավալեզվաբանությունն ու լեզվաիրավաբանությունը արագ
զարգացող ոլորտներ են, քանի որ հասարակության զարգացման ներկա փուլում
իրավական լեզվի գրագիտությունն ու իրավաբանական փաստաթղթերի ճշգրիտ
ձևակերպումը դարձել են հրատապ պահանջ: Աշխատանքն ուսումնասիրում է
իրավաբանական խոսույթը՝ վերջինս դիտարկելով որպես գիտական ոճի
հաղորդակցական դրսևորում իրավունքի և լեզվի փոխազդման տիրույթում:
Հետազոտության բուն առարկան իրավական պաշտոնական փաստաթղթերի՝
մասնավորապես միջազգային պայմանագրերի լեզուն է, դրանց անգլերեն ու
հայերեն տարբերակների համեմատությամբ և թարգմանական խնդիրների
վերլուծությամբ: Ուսումնասիրության նման առարկայի ընտրությունն ինքնին
ապահովում է հետազոտության արդիականությունը, քանի որ ներկայիս
հասարաքաղաքական զարգացումների համատեքստում խիստ կարևորվում է
հանրության իրազեկության բարձրացումը տարաբնույթ սոցիալական և
իրավական խնդիրների նկատմամբ: Անշուշտ, ժամանակակից հասարակության
մեջ իրավական փաստաթղթերի ճշգրիտ շարադրումը, միջազգային

պայմանագրերի հստակ բովանդակային ներկայացումը, ինչպես նաև դրանց համարժեք թարգմանությունը ձեռք են բերել կենսական նշանակություն:

Աշխատանքի գիտական նորույթը բազմաշերտ է՝ պայմանավորված իրականացված հետազոտության միջգիտակարգայնությամբ: Նախ, իրավական փաստաթղթերը լեզվական արտահայտման բոլոր մակարդակներում դիտարկվում են որպես իրավաբանական և պաշտոնական խոսույթների միասնության վրա հիմնված ոճագործառական դրսևորում, ինչը նոր է և հեռանկարային: Նոր է նաև այն, որ իրավական փաստաթղթերի լեզվական միավորների ճշգրիտ ընկալումը և դրանց համարժեք թարգմանության փորձը աշխատանքում դիտարկվում է ինչպես լեզվական, այնպես էլ հայերենի արտալեզվական համատեքստի հաշվառմամբ:

Ատենախոսությունը կառուցվածքային առումով ամբողջական է. ներածության, երկու համապարփակ գլխի, ծանոթագրությունների, եզրակացության և հավելվածների տրամաբանական հաջորդականությունը ապահովում է նյութի աստիճանական բացահայտումը և վերհանումը: Ներածական մասը ձևակերպում է ուսումնասիրության տեսական ու գործնական շրջանակները, հիմնավորում է թեմայի արդիականությունը և նորույթը, սահմանում է հետազոտության նպատակը, խնդիրները և մեթոդաբանությունը:

Աշխատանքի առաջին գլխում ներկայացված է գործառական ոճերի համակարգը, դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև իրավաբանական խոսույթի տեղն ու դերակատարությունը այդ համակարգում: Աշխատանքի այս մասում ելակետային է այն դրույթը, որ իրավաբանական խոսույթի ենթատիպ հանդիսացող իրավական պաշտոնական փաստաթղթերի լեզուն, մի կողմից, կապված է իրավունքի ոլորտին և հանդես է գալիս որպես գիտական ոճի իրավաբանական դրսևորում, իսկ մյուս կողմից՝ բնորոշվում է խիստ պաշտոնականությամբ ու կանոնակարգվածությամբ՝ մոտենալով պաշտոնական-գործարար ոճին: Հենց այս երկակի բնույթն էլ ձևավորում է իրավական փաստաթղթերի հաղորդակցական և գործառական առանձնահատկությունները լեզվական բոլոր մակարդակներում, ինչն էլ ատենախոսն հաջողությամբ վեր է հանել աշխատանքի երկրորդ գլխում իրականացված վերլուծության ընթացքում:

Աշխատանքի երկրորդ գլխում հանգամանալից քննության են ենթարկվում միջազգային պայմանագրերի բառապաշարային, տերմինաբանական, շարահյուսական և հապավումային կառուցվածքները, դրանց թարգմանական դժվարությունները և գործառական կիրառության առանձնահատկությունները: Այս գլուխն առանձնանում է գործնական կարևորությամբ՝ ներկայացնելով թե՛ տեսական հիմնավորումներ, թե՛ կոնկրետ իրավական փաստաթղթերի համեմատական քննություն: Առանձնահատուկ արժեք ունի կորպուսային վերլուծության կիրառումը, ինչը նորություն է հայաստանյան իրավաբանական լեզվաբանության ոլորտում և բարձրացնում է աշխատանքի գիտական արժեքն ու հիմնավորվածությունը:

Այսպիսով մեր ուշադրությանն է ներկայացված բավականին հասուն, արդիական, հետաքրքիր և համապարփակ ուսումնասիրություն: Այն հանգամանքը, որ տվյալ երևույթը դիտարկվել է լեզվական տարբեր մակարդակների տեսանկյունից, աշխատանքը դարձնում է ավելի արդիական և նշանակալից: Աշխատանքն ունի կուռ և պատճառաբանված կառուցվածք: Ատենախոսի կարևոր արժանիքներն են նյութի լավ իմացությունը, նուրբ դիտողականությունը, լեզվական փաստերը ճիշտ գնահատելու կարողությունը, ճշգրիտ և դիպուկ օրինակներով դրույթները լուսաբանելու հմտությունը: Նյութի քննությունը հիմնականում կատարվում է տրամաբանական հետևողականությամբ, հարցադրումները հստակ ձևակերպված են, եզրահանգումները հիմնավորված: Փաստաթղթային նմուշների մանրագնին քննությունը հնարավորություն է տալիս ատենախոսին դիտարկել իրավաբանական խոսույթը՝ որպես որոշակի օրենքներով կանոնակարգվող խոսքային գործընթաց և ներկայացնել դրա որոշակի ժանրային դրսևորումների լեզվական և արտալեզվական առանձնահատկությունների բնութագիրն ու դերը թարգմանական գործընթացում: Անշուշտ վերոնշյալը աշխատանքի հիմնական ձեռքբերումներից է:

Սկզբունքային դիտողություններ չունենալով հանդերձ՝ կուզենայի հայտնել որոշակի նկատառումներ և ստանալ որոշ պարզաբանումներ:

- Աշխատանքում տեղ են գտել խմբագրական բնույթի որոշ անճշտություններ, որոնք ցավոք երբեմն անխուսափելի են նմանատիպ աշխատանքներում: Նախ, դրանք վերաբերում են որոշ տերմինների կիրառությանը, օրինակ՝ ի՞նչ է նշանակում *շարահյուսական բարդություն*, արդյո՞ք նախադասությունը, դերբայական կամ կրավորական կառույցները «շարահյուսական բարդություններ են» (էջ 10):
- Չեմ կարող կիսել ատենախոսի այն կարծիքը, որ *therefore, hereby, unly* բառերը հնաբանություններ են (էջ 57): Գուցե դրանք առավել գործածական են պաշտոնական ոճում, սակայն չեն կարող հնաբանություն համարվել:
- Քանի որ տվյալ հետազոտության համար առաջնային է անգլերեն սկզբնաղբյուրը, տրամաբանական կլիներ բոլոր դեպքերում վերլուծությունը սկսել անգլերեն նյութից, ապա անցնել հայերեն նյութին (էջ 33, 94, 95, 118):
- Առկա են որոշ անհամապատասխանություններ տեքստային հղումների և ծանոթագրությունների միջև (էջ 61, 85), ինչպես նաև բերված օրինակի և բացատրության միջև (էջ 55):
- Ընդհանուր առմամբ աշխատանքում իրականացված շարահյուսական վերլուծությունը հստակ է և վեր է հանում անգլերենի և հայերենի քերականական կառույցների համապատասխանության/անհամապատասխանության հետաքրքիր օրինաչափություններ, սակայն որոշ դեպքերում (էջ 84, 85) ճիշտ չեն որոշված նախադասությունների տիպերը. երկու դեպքում էլ և՛ անգլերենում, և՛ հայերենում ունենք խառը տիպի համաստորադաս նախադասություններ:
- Գովելի է այն փաստը, որ աշխատանքում կիրառվել է լեզվաբանական քննության արդիական մեթոդներից մեկը՝ կորպուսային վերլուծության մեթոդը, վեր հանելու անգլերեն և հայերեն փաստաթղթերում հապավումների կիրառական-գործառական առանձնահատկությունները, դրանց կիրառության հաճախականությունը: Սակայն այստեղ ևս տեղ են գտել որոշակի անճշտություններ: AntConc-ը Լոուրենս Անթոնիի կողմից մշակված բազմագործառությային համակարգչային ծրագիր է, որը թույլ է

տալիս համակարգված կերպով վերլուծել մեծածավալ տեքստեր/լեզվական կորպուսներ: AntConc-ը կորպուսային վերլուծության գործիք է, և ոչ թարգմանական գործիք (ինչպես նշում է ատենախոսը սեղմագրի էջ 6-ում, ատենախոսության էջ 125-ում), որը լայնորեն կիրառվում է լեզվաբանության, թարգմանաբանության, տերմինաբանության ու գիտական հետազոտությունների մեջ: Չնայած այն կարող է ինտեգրվել արհեստական բանականության որոշ կոմպոնենտների հետ, սակայն չի կառավարվում արհեստական բանականության կողմից, ինչպես պնդում է ատենախոսը (էջ 110): Տեղին չենք համարում նաև աշխատանքում *Արևակ* արևելահայերենի ազգային կորպուսին անդրադարձը, քանի որ՝ կազմված լինելով միայն գեղարվեստական և լրագրային ոճի տեքստերից, այն չէր կարող օգտակար լինել իրականացված կորպուսային վերլուծության գործընթացում: Կարելի էր վերոնշյալ կորպուսի մասին տեղեկատվությունը ընդգրկել ծանոթագրություններում:

- Եվ վերջապես, կուզենայի որոշակի պարզաբանումներ ստանալ հետևյալ հարցի վերաբերյալ. աշխատանքի հետազոտական մասում՝ անգլերեն և հայերեն նյութի վերլուծության ընթացքում, հետևողականորեն մատնանշվում է սկզբնաղբյուր և թարգմանված տեքստերի բառաքանակը: Ի՞նչ նպատակ ունի այս անդրադարձը, և արդյո՞ք բառաքանակի համեմատությունը ուղակիորեն կապվում է թարգմանության որակի հետ:

Նշված դիտարկումները բոլորովին չեն նսեմացնում այս հետաքրքիր և համապարփակ հետազոտության արժանիքները: Այն հանգամանքը, որ իրավական միջազգային փաստաթղթերը դիտարկվել են լեզվական տարբեր մակարդակների և միջգիտակարգայնության տեսանկյունից, դարձնում է աշխատանքը ավելի արդիական և նշանակալից:

Ատենախոսությունը ներկայացնում է որոշակի տեսական արժեք, քանի որ այն պարունակում է բանասիրական գիտությունների բնագավառում էական նշանակություն ունեցող խնդրի նոր լուծում: Ուսումնասիրության արդյունքները

կարող են կիրառվել լեզվաիրավագիտության, լեզվի մշակույթի, գործառական ոճաբանության, դիսկուրսի և հաղորդակցության տեսության մեջ, իսկ մշակված սկզբունքները կնպաստեն ոչ միայն իրավաբանական խոսույթի ընկալմանն ու մեկնաբանմանը, այլև այդ ոլորտում թարգմանության գործընթացի հաջող զարգացմանը ՀՀ-ում :

Ուստի վստահաբար կարելի է ասել, որ Վ. Միրիջանյանի «Իրավաբանական փաստաթղթերի թարգմանության խնդիրը գործառական-հաղորդակցական լույսի ներքո» ատենախոսությունը բավարարում է Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակը անշուշտ արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Հեղինակի հրատարակած աշխատանքները և սեղմագիրը արտացոլում են
ատենախոսության հիմնական դրույթները:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Ա. Է. Չուբարյան

Հաստատում եմ պրոֆեսոր

Ա. Է. Չուբարյանի ստորագրությունը



ԵՐԶ գիտքարտուղար

Մ. Վ. Հովհաննիսյան

12.11.2025թ.